

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱԲԱԿ ԿՈՒ ՈՒՆԻ ԹՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւնն ՆՈՐ ՕՐ լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,  
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԻ

# ՆՈՐ ՕՐ

Հ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՓՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՔ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԻՒԳՐՈՒԹԻՒՆ

ՆԳԻՊՑՈՍ

Գանձիւի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՆՈՒՄՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10

ԹՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎՈՒՄԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	» 7
Վեցամսեայ	» 4

ՔԱՏԱՆՈՐԻՒԳՐՈՒՄԸ ԿԱՆԻՊ Ե  
ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՏԱՆՔԸ  
Թերթին վարչութեան վրայ է

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՑՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն  
ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՏՈՒ-  
ՑԻՉ ՏԻՍԱ ՍՄԱՐԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈ-  
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի  
ԸՆԿՎԱԿԱՐԵՆԵՐՆ ԱՆՎԱԿԻՐ ԿԸ ՆԿԱՏ-  
ՈՒԻՆ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆՍ ԿԸ ՓՈԹՈՒՑ ԾԱՅ-  
ՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԱՐԳՐԱ-  
ՊԵՏ ՏԻՍԱ ՍՄԱՐԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐ-  
ՈՒՄՆԷ ՍԿՍԵԱԼ ԴԱԳՐԱԵԱԼ Ե «ՆՈՐ  
ՕՐ»-Ի ԽՄԱՐԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:  
22 ՍԵՊՏ. 900

Նոր Օր ի վարչութիւնը կը խնդրէ  
Արտասահմանի ու կողմասի արգոյ  
բաժանորդներէն որ հաճին պահան-  
ջել կրկնողով մը «Նոր Օր»-ի պակաս  
ստացուած թիւերը, որոնք պիտի  
զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի Նոր Օր  
ստացող բոլոր կողմասի հայ թեր-  
թերու ու Հանդէսներու Պատ. Խում-  
բազիրներէն որ իրենց հրատարակու-  
թիւնները փոխանակեն Նոր Օրի  
հետ:

## ՔՐԱՆԱՅԱՅ ՄԱՍՈՒԸ ՈՒ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Աշխարհային ցուցահանդէսի առթիւ  
Փարիզի մէջ տեղի ունեցած Միջազ-  
գային գաղթականական մամուլի Գոն-  
կրէի Սեպտեմբեր 1-ի նիստին մէջ բա-  
նախօսութիւն մը ըրաւ Պ. Չերազ երբ  
նիւթ ընտրելով «Հայերը Պրանսայի  
միացնող կապերը»: Պատմագէտ ատե-  
նաբանն յիշատակեց միջին դարու  
պատմութենէն հետեւեակարար գէպ-  
քերն ապացուցանելու համար թէ  
որքան սերտ կապերով կապուած են  
Հայերը Պրանսայի հետ:

1. Հայերն Պրանսայի Խաչկիրներուն  
համակիր ու դաշնակիցս եղած են.  
նոյն ինքն Գրիգոր ԺԳրդ. Պապն 1854

Թուականին հրատարակած հրովար-  
տակին մէջ ըսած է թէ «Հայ ազգի  
արժանիքներէն մին եղած է այն մար-  
դասէր անձնութիւնը զոր ցոյց  
տուած է դա ամեն ատեն որ քրիստո-  
նեայ բանակներն ու իշխանները կ'եր-  
թային փրկելու նուիրական քաղաքն  
(Երուսաղէմ)»: ոչ մէկ ազգ և կամ  
ժողովուրդ չը կարկառեց օգնու-  
թիւն այնքան սիրայօժար որքան Հայ  
ազգն, որ իւր բովանդակ մարդիկնե-  
րով, ձիերով, զէնքերով անոնց տրա-  
մադրութեանը տակ դրած էր զինքն:

2. ԺԳ. դարու մէջ երբ Հայոց թա-  
ղաւորութիւնը կործանեցաւ, Հայերը  
իրենց թաղաւորական թագը նուի-  
րեցին Պրանսայի Լուսինեան գերդաս-  
տանին. ոչ ապաքէն Լուսինեան տան,  
1393ին բանտարկուեցաւ յեգիպտոս  
և որու մարմինը այսօր ամփոփուած  
է Փարիզի մէջ Սէն. Տրնիի վայրը կանգ-  
նուած դամբարանին մէջ որ իբր ուխ-  
տատեղի կը ծառայէ:

Հայերը Պրանսայի միացնող կա-  
պերն Հայոց թաղաւորութեան կոր-  
ծանուած վերջն իսկ, մինչև ցայսօր  
հաստատ ու անխախտ մնացած են.  
կրնանք ըսել թէ արդի Հայաստանը,  
Պրանսայի մտաւորական մի գաղթա-  
կանութիւնն է. Պրանսա Հայ ուսա-  
նողներու վառարանն եղած է. Պրան-  
սայի հանճարներու աշակերտներն,  
ասիական ժողովրդի այդ Հայ զաւակ-  
ներն կէս դարէ ի վեր յաջորդաբար  
հրատարակած են մինչև իսկ Ֆրան-  
սերէն լեզուաւ թերթեր և լրագիր-  
ներ, զորս մի ըստ միովէ արժանի է  
յիշատակել:

1. Գոյունց ՏՐ Մախն, (Մասեաց  
Աղանի). հայերէն և ֆրանսերէն լեզ-  
ուաւ անդրամիկ թերթն եղաւ Հայ  
խմբագրութեան, զոր 1834ին հիմնեց  
Փարիզի մէջ Գաբրիէլ Այվազովսկի եղ-  
բայր մեծանուն նկարիչ Յ. Այվազով-  
սկի, որուն աշխատակցեցաւ Ն. Բ.  
Գուրտով իշխան Լուսինեան, տաղան-  
դաւոր գրագէտն, որ այժմ կը ընա-  
կի ի Փարիզ:

2. Ռեժորս. — Չմուսնիոյ արդի կա-  
րեւոր թերթերէն մին է որ կը հրա-  
տարակուի երեքշաբթի և չորեքշաբթի  
օրերը, հիմնադիրն է Պ. Էթիէն Ու-  
կան, հայ ֆրանսագէտ մը որ 1848ի

յեղափոխութեան ատեն Փարիզ գնա-  
ցած էր յատկապէս յեղափոխութիւնը  
չատաղովելու համար (\*):

3. Բոյիշիկնէլ. — 1874ին հիմնած է  
Կ. Պոլսոյ մէջ Պ. Օ. Իսկէնտէր, Վենե-  
տիկի Ռափայէլեան Գոյէժի նախկին  
ընթացաւարտ, իւր հեգնական և ուժ-  
գին ոճով սարսափ ազգեց այն ա-  
տենի թրքական վարչութեան:

4. Մէսաժէ Օթուման. — 1876ին  
երբ Պոսնիա-Հէրզէգովինի ապստամ-  
բութիւնը կը տարածուէր դէպ ի Պալ-  
քան, Պ. Օ. Իսկէնտէր կը հիմնէր քա-  
ղաքական սոյն լրագիրն, պաշտպանե-  
լու համար Թուրքիոյ քրիստոնեաներու  
իրաւունքն:

5. Պիլիկարի. — 1882ին Պուլկարիոյ  
մէջ առաջին անգամ ֆրանսերէն լեզ-  
ուաւ հրատարակուող թերթն եղաւ, խմ-  
բագրութիւն Պ. Օ. Իսկէնտէրի: Ատեն  
մը մինչև իսկ Պուլկարիոյ պաշտօնա-  
կան օւկանն կոչուեցաւ դա:

6. Գոռնիէ ՏՐ Պայգան. — Պ. Օ.  
Իսկէնտէրի չորրորդ և վերջին թերթնե-  
ղաւ, 1888ին հիմնուած. ուրկէ վերջը Պ.  
Օ. Իսկէնտէր խնջեալ հեռացաւ լրա-  
գրական ասպարէզէն, մտնելով Պուլ-  
կարիոյ Արտաքին Գործոց նախարա-  
րութիւնը, ուր կը վարէ այժմ Գար-  
տուղարի պաշտօնն:

7. Հայաստան. — Պ. Պ. Պուուսալի (\*\*)

(\*) Ռեժորսի խմբագիր Պ. Էթիէն Ու-  
կան, Փարիզի Մուրատեան վարժարանի  
նախկին աշակերտներէն մին է, զասակից  
Յարութիւն փաշա Տատանի. յեղափոխա-  
կան գլուխ մ'է, քաղաքացիական ֆրանսերէն  
լեզուի. երեսուն տարիներ է վեր անխոնջ  
կը շարունակէ իւր լրագրի հրատարակու-  
թիւնը Չմուսնիոյ մէջ. որի Հայոց փ'առքն  
է դա:

(\*\*) Թէպէտև բնիկ Եգիպտացի, բայց և  
այնպէս յաջողած է ստանալ հայրենասէրի  
մը տիտղոսը զոր Պ. Մինաս Չերազ կու-  
գայ շոյլել իւր ատենաբանութեանը մէջ  
Պ. Պուուսալիի Արդարև Պ. Պուուսալի առ-  
թիւն օգտուելու յատկութիւնն ունեցած է  
միշտ. երբ փաստաբանութիւն ուսանելու հա-  
մար Փարիզ կը զրկուի, առիթ համարելով,  
կը սկսի հրատարակել ֆրանսերէն լեզուաւ  
թերթ մը որ կը տպուի Լոնտոնի մէջ, և  
որովհետև հայրենասէրն Պուուսալի իւր մայ-  
րենի լեզուին հայերէնի անտեղեակ է, իրեն  
աշխատակից կ'առնու Պ. Սըվազը, որ կը  
խմբագրէ հայերէն մասը. սոյն թերթը կը

և Սըվազը. երկու հայրենասէրներ  
1888 Նոյեմբեր 1ին սկսան հրատա-  
րակել Լոնտոնի մէջ սոյն ֆրանսա-  
թերթն, հանդերձ հայերէն թարգմա-  
նութեամբ, մօտ երեք տարիներ. սոյն  
թերթի նպատակն եղաւ պահանջել  
ներսէս վարժապետեանի հաստատել  
սուած Պէուլինի 61րդ. յօդուածի գոր-  
ծադրութիւնը:

8. Անլընիւր. — Առօրեայ լրագիր  
մը զոր 1899 մարտ 13ին սկսաւ հրա-  
տարակել Պ. Կարապետ Տաքէս, Հոռով-  
մի մէջ. Թրքական կեղտոտ վարչու-  
թիւնը քննադատող այս թերթին կեան-  
քը կարճատև եղաւ թէպէտև Պ. Տա-  
քէս մօտէն ուսումնասիրած էր Թուրք  
վարչութեան գաղտնիքն. որոյ համար  
անտիպ փաստեր ունէր ի ձեռին:

Չմուսնալ ի Եգիպտոս. — Սոյն կի-  
սաչարթագրութիւնը հրատարակուեցաւ  
Փարիզի մէջ 1 Յունիս 1893ին, զոր  
կը խմբագրէր Պ. Իսկէնտէր Մախնա-  
զուլի, որդի նշանաւոր փաստաբանի մը  
որ ամուսնացած էր Սերպուհոյ մը հետ,  
կը ճառէր միջազգային քաղաքական

մկրտուի Հայաստան անուամբ, որ կը բո-  
ղոքէ Պէուլինի 61րդ. յօդուածի անգործադ-  
րութեանը դէմ, մինչև այն թուականն որ  
Հայաստան կը բորբէ իւր 34րդ. թիւն, ու  
Պ. Պուուսալի կը ստանայ փաստաբանու-  
թեան վկայագիրը, որով այլևս յոգնած ու  
մաշած, անհրաժեշտ կ'ըլլայ վերադառնալ զէպ  
ի մայրենի երկիրն Եգիպտոս, ուր Պ. Պուու-  
սալի կը հաստատէ պաշտօնատեղի մը ու  
կը սկսի պաշտպանել այս անգամ Փարաւո-  
նի ժողովրդեան միջև ծագում առած առեւ-  
տրական ու պատժական ամեն դատեր, ա-  
րարեքն և ֆրանսերէն լեզուաւ ու միևնոյն  
եռանդով կը պաշտպանէ նոցա գատերն:  
Հայաստանի ձայներն կը մարին այլ ևս  
որոնց կը յաջորդեն Փարաւոններու ազ-  
մուկներ, Եգիպտոսէն ի մօտոյ ականա-  
տեա, կը դիտէ Պուուսալին որ իւր Էօզպէ-  
քիէի խցիկին մէջ քաշուած միշտ իւրօր-  
բարացիով կը զբաղի, ու չը հետաքրքրուի  
այլևս Հայուն, այդ Եգիպտոսէն երբեք  
չուզեր հաւատալ թէ դա «Հայաստան»-ի  
նախկին խմբագիրն է. Թող չը յուսահատի.  
առաջին առիթին թերևս դարձեալ պիտի  
տեսնէր Պուուսալին որ թողով փարաւոնի  
երկիրն ու շալկելով ասաք տարիներու մի-  
ջոցին դիպած մետաղն՝ վերադառնալ Լոն-  
տոն վերստին բանալու Հայաստանի իւր-  
բարատունն աւելի փայլուն կերպով:  
Մ. Խ.

նիւթերու և Պալգանեան վերածնեալ ազգերու իրաւանց վրայ :

10 Գունդա. (Պայքար). — Հրատարակուեցաւ Աթէնքի մէջ, զոր հիմնեց Պ. Պրլխտանեան 1897ին. Հայ մեծատան մը որդի և ծննդեամբ յեղափոխական, իւր թերթի միջոցաւ յարձակեցաւ արդի ընկերութիւններու վրայ. Յունական կառավարութիւնը ջնջեց գոյն թերթն և դուրս հանեց զանի իւր երկրէն :

11. Էգօ Տը շա Յօրէ. — Պոէզիլի մէջ սկսած է հրատարակուիլ անցեալ ապրիլ 15էն ի վեր որոյ հիմնադիրներն են Պ. Պ. Չամբի և Լ. Ան Աշճեան :

12. ԱՄՐՄԵՆԻ. — 1889 նոյեմբեր 15ին հիմնեցի սոյն թերթն Լոնտոնայի մէջ, որոյ պարունակութիւնն է քաղաքական և բանասիրական : Նպատակս եղած է թերթիս միջոցաւ պաշտպանել Հայկական դատն, որու համար նուիրած եմ անձս 1876էն ի վեր, և ծանօթացնել Եւրոպայի՝ Արարատեան ժողովրդի բարոյական, մտաւորական և արուեստական կեանքն :

«Մէշվէրէթ»ի դատուն վերջը համազում գոյացուցի թէ Յրանսայի մէջ կան դատարաններ, որ յարգել կուտան մամոյ ազատութիւնն. Անցայ Նեղուցէն դէպ ի այս հողը, և եկայ 1898 մայիս 1ին հաստատուեցայ ի Փարիզ հրատարակելու «ԱՄՐՄԵՆԻ»ն, ուրկէ մէկ մէկ օրինակ պատիւն պիտի ունենամ Ձեզ ներկայելու յետ ժողովոյդ :

### ԿԱՐԱՊԵՏ ԳԱՆՈՒՍ

(Շար. Յախորդ թիւէ՞ 0 եւ վերջ)

Նշանակելի պարագայ մ'է հոս, որ երբ կարապետ Գալուստ այս կտակագիրը կ'ընէր, փոխաբաններուն մէջ ամենէն աւելի զինք սիրողն ու պաշտպանողն, Ապպաս փաշա Ա. մեռած էր չորս տարիներէ ի վեր և կառավարութենէ անհատներու վարձու տրուած հանքերն ու գործարաններն կամ այլ ևս գոյութիւն չ'ունէին և կամ նոր ընդունուած դրութեան համեմատ՝ կառավարութիւնն ինք ուղղակի կը շահագործէր զանոնք. հետեւաբար կարապետ Գալուստ ի վիճակի չէր առաջուան մեծամեծ շահերն ահնկալելու, մանաւանդ թէ ինքն ալ ծերացած՝ երիտասարդական տարիներու աշխոյժն ու կորովը չէր զգար իր մէջ ու կը բաւականանար իր կալուածոց եկամտաներն և ի Պուլազ ունեցած բազմաթիւ շոգենաւակներուն և խոշոր մակրոյկներուն վարձքերն ստանալով և մեծաբանակ պահանջներու գանձումին ետեքն ըլլալով : Կարապետ Գալուստ ամբան տաք եղանակին իսկ Եգիպտոսէ չէր հեռանար. տարին քանի մը շաբաթ կ'անցունէր Հէլլոսանի հանդիպակաց վերոյիշեալ Շէյխ-էթման դիւղի ազարակին բնակարանին մէջ : Իր կենաց վերջին ժամանակներն գործէ բոլորովին ձեռնթափ՝ քաջուած էր այդ գիւղն, երբ Առաջնորդարանէն հրաւեր ստացաւ գալու ի Գահիրէ, մասնակցելու այն խորհրդակցութեան, որ

տեղի պիտի ունենար Պոլսոյ ազգային պատրիարքարանէ եկած այն պաշտօնագիր մասին, որով կը յանձնարարուէր ազգային Սահմանադրութեան գործադրութիւնն Եգիպտոսի մէջ : Հաւանաբար կարապետ աղա այդ խորհրդակցութեան ներկայ գլուխուէրու ժամանակ ունեցած չէ, վասնզի Գահիրէ գալէն մէկ երկու օր ետքը, 1884 Ապրիլ 8/20ի գիշերը յանկարծական մահուամբ կը վախճանի, իր Պիր-Հումմուսի բնակարանին մէջ. գոյժը կայծակի արագութեամբ կը տարածուի քաղաքիս ամեն կողմը, ընդհանուր սուգ և վիշտ պատճառելով ամբողջ ժողովուրդին, առանց խտրութեան ցեղի և կրօնքի : Գոյժը կ'ունենայ հետեւեալ օրն փառաւորապէս և իր զիրքին արժանի բոլոր պատիւներով. մարմինը կ'ամփոփուի ազգային գերեզմանատան մէջ, իր վաղամեռիկ սիրելեաց բով. չքեղ դամբարան մը կը բարձրանայ իր գերեզմանին վրայ հետեւեալ վերտառութեամբ.

«Դամբարան աչն. կարապետ ազայի Տէր Գալուստեան վանեցոյ, պայծառափայլ իշխանի և բարերարի, որ հանգեաւ ի Տէր ամաց վաթսուն և երկուց յամի Փրկչին 1884, յԱպրիլ 8, թողեալ ի սուգ անմխիթար զսիրելիս և զազգ իւր համօրէն» :

\* \*

Կարապետ Գալուստ իր կենդանութեանը կը վայելէր ընդհանուր համակրութիւն և բարեկամութիւնն Հայ և օտարազգի բարձրաստիճան անձնատուութեանց, որոնցմէ ողբացեալ մեծանուն Նուպար փաշա, այնչափ մտերիմ էր իրեն, որ ի Պոլիս ամուսնութենէն յետոյ երբ Եգիպտոս կուգայ, իր Տիկնոջ հետ քանի մը շաբաթ հիւր կը մնայ Գալուստի բնակարանն :

Կարապետ աղա շերտ կրօնասէր ու եկեղեցի յաճախող մ'էր, ողորմած, բարի, բայց բարկացող ու քիչ մ'ալ խստաբարոյ. կը սիրէր զուարճութիւններն, բայց եթէ մինչև գիշերն ուլ ատեն ալ զբօսնուր և հազիւ 1—2 ժամ միջոց ունենար հանգստանալու, դարձեալ առտուն կանուխ կ'ընէր անկողնէն, Նարեկէն որոշեալ գլուխները կը կարդար անհրաժեշտաբար և իր գործին կ'երթար անպատճառ. կը հագուէր ինչպէս կը հագուէին ժամանակակից նշանաւոր հայերուն զրեթէ ամենքը. մետաքսեայ երկար պարեգօտ մը իր պարթև հասակը կը ծածկէր պարանոցէն մինչև ոտքն, Տրիպոլսեան գօտի մը կը սեղմէր իր մէջքը, կարճազգեստ մը պարեգօտին վրայէն մինչև գօտին, կուրճքին կողմէն բաց, ճերմակ փաթթոցով ֆէս մը իր գլուխը, մեծ՝ բառին նիւթական և իմացական իմաստներով միանդամայն :

Կարապետ աղա Գալուստեանի թողած հարստութեան ճիշդ քանակն չգիտենք. բայց անտարակոյս ազգին նուիրածներուն առ նուազն քանի մը

պատկը կար. իր ժառանգորդներէն ոմանք սակայն առասպելական համեմատութիւններու կը բարձրացնէին անոր հարստութիւնն, յայտարարելով որ փողերանոցին Տեսչութեան օրով ամբողջ երեք տարի կոխուած բոլոր ոսկեղորաններն կարապետ աղա ինք կ'ստանար և փոխարէնն իր անձնական գանձարանէն կուտար ձուլածոներ նոյն մետաղէն, վասնզի կը սիրէր պահել նորատիպ և միկնոյն թուականը կրող դրամներ :

Ազնիւ ընթերցողին համար սակայն, շատ աւելի շահեկան է գիտնալ կարապետ աղա Գալուստի ազգին նուիրած շարժումն ու անշարժ կալուածներու արժէքն. փութեմբ ուրեմն ըսելու թէ այդ արժէքն այսօր 430 հազար ֆրանքէն աւելի է և մեծ յոյս կայ որ ապագային կրկնապատիկ և ալ աւելի բարձրանայ : Անշարժ ըստացուածոց միայն Գահիրէի մասին այս տարուան զուտ արդիւնքը 29000 ֆրանքի կը յանգի, մեծ հաւանականութեամբ որ ապագայ տարիներու մէջ ալ աւելի առատանայ :

Քանի մը խօսք ալ կտակի գործադրութեան մասին ու վերջացնենք : Տէլճայի էպատիլէի արդիւնքն բարերարին մահէն անմիջապէս ետքը յատկացուած է վարժարանի ծախուց. իսկ Շէյխ-էթմանի և Ազիլիյէի արդիւնքն Տիկնի Արուսի այրի վիճակաւ վախճանէն յետոյ, որ պատահած է 1887 Յուլիս 12/24ին, Նոյն թուականէն ասդին Աղեքսանդրիոյ տուններուն արդիւնքն ալ տեղոյն Պատ. Թաղական խորհուրդի տրամադրութեան տակ դրուած է վերջնապէս :

Շէյխ Էթմանի և Ազիլիյէի ազարակներուն բերքէն քանի մը տարի վաթսունական էրտէպ ցորեն և Ղաղարոս աղա Տ. Գասպարեանի պահանջի մասնավճարներէն քանի մը հարիւր ոսկի ստացուած և կտակի տրամադրութեան համաձայն բաժնուած է Հայ աղքատաց և զգեստ շինուած վարժարանի կարօտեալ երկսեռ սանուց : Հետեւաբար այս կրկին հաշիւներէն պահանջ կար այրի Տիկնի Արուս գալուստեանի մահուան ժամանակ. շնորհիւ աշակրթութեան և ջանից ժամանակին Առաջնորդ Ամեն. Իզմիրլեան Սրբազանի, այդ պահանջներուն փոխարէն Տիկնի Արուսի ձեռքած ժառանգութենէն 37000 ֆրանքի չափ գումար մը գանձուեցաւ և ամենամեծ մասամբ յատկացուեցաւ ազգային գետնի վրայ տան մը շինութեան, որու հասոյթն վարժարանն ու աղքատներն իրենց մէջ կը բաժնեն հաւասարապէս :

Վէճերու, դէպքերու, դատերու և ուրիշ պատճառներու հետեանքով, կտակի պաշտօնական գործողութիւններն չյաջողեցան մինչև 1886. Ի մեծ բարեբաղդութիւն Եգիպտոսայ դաղութիւն, այդ տարին Փարաւոններու երկրին Առաջնորդ ընտրուեցաւ Ամենապատիւ Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոս Իզմիրլեան, որու ձեռք առած իմաստուն, չըլահայեաց ու հեռատես միջոցներուն և վսեմ. Թագ-

ւոր փաշայի աղքատիւական ջանքերուն շնորհիւ, կարապետ աղա Գալուստի կտակն 1887ին, այսինքն բարերարին մահէն 23 տարիներ յետոյ, Եգիպտական կառավարութենէն ճանչցուեցաւ և Գահիրէի, Աղեքսանդրիոյ և Նահանգաց դատարաններու մէջ արձանագրուեցաւ, կտակեալ անշարժ ստացուածոց կալուածագրերն օրէնքին պահանջած ամեն ձեւակերպութիւններով ազգին անուան դարձան, և առ այս կարևոր արձանագրութիւններն պատկանեալ տոմարներուն մէջ կատարուեցան. և ազգն այսօր բացարձակ տէր է նոյն ստացուածքներուն, որոնց մատակարարութիւնն ալ իր ձեռքն է :

Օրհնեալ ըլլայ յիշատակն ամեն անոնց, որ ստացուածքներու տէր կ'ընեն իրենց ազգն. երիցս և յաւէտ օրհնեալ յիշատակն ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԳԱՆՈՒՍԻ :

Ն. Մ. ԱՂԱՉԱՐՄ  
Գահիրէ Սեպտ. 1900

### Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Յունաց նորընտիր Պատրիարք Յովթիոս Սրբազան, երկուշաբթի օր ժամը Յին Հայոց Ազգային Առաջնորդարանը գալով պաշտօնական այցելութիւն տուաւ ընկերակցութեամբ երկու բարձրաստիճան կղերներու և պատրիարքական գործակատարին : Առաջնորդական Տեղապահ Արժ Տ. Մամբրէ քահանայ և Իրանապետ Տիւար Նազարէթ Աղազարմ արժանավայել ընդունելութեամբ մեծարեցին Սրբազան հիւրն : Գրան վայրկեանի մօտ տեւեց տեսակցութիւնը որու միջոցին Յովթիոս Սրբազան Թուրքերէն լիզուաւ ու համակրանք խօսեցաւ Հայ կղերներուն վրայ, չեչտելով այնուհետեւ ի մասնաւորի Երուսաղէմայ Պատրիարք Տ. Յարութիւն Վեհապետեանի և երջանակայիշատակ Ներսէս Վարժապետեանի հետ ունեցած հին մշտեքմական յարաբերութիւններն, խընդակցութիւնը յայտնեց Յովթի Եպիսկոպոս Այվազեանի՝ Եգիպտոսի Առաջնորդ ընտրուած ըլլալուն :

Յովթիոս Պատրիարքի այցելութեանը մասին Յունաց Պատրիարքարանէն կանխաւ ուէ լուր արուած չէր որպէսզի Ազգային Առաջնորդարանի սրահը ընդունելութեան պահուն առ ի յարգանս ներկայ գտնուէին նաև կրօնական և աշխարհական գաւէն ուրիշ անդամներ ալ բայց և այնպէս սոյն այցելութիւնը որքան անակնկալ էր, իւր թողած տպաւորութիւնն ալ այնքան քաղցր եղաւ :

Ծառք կ'իմանանք թէ «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր Պ. Տիգրան Արփիարեան ձեռքակալուած է ի Պոլիս, մինչև իսկ սքսորուելու վտանգին մէջ է : Պ. Տիգրան Արփիարեան երկու տարի առաջ Գահիրէ գաղթած էր, ուր այդ միջոցին սկսած էր հրատարակուիլ «Փարոս» որոյ Տնօրէնին խընդրանօք ստանձնեց խմբագրութիւնը բայց Պ. Տիգրան Արփիարեան նա-

խառնակութիւնը թիւն թիւն դադարու- մը, վերադարձած էր Պոլիս խմբագ- րելու համար «Մասիս»ը

\* \*

Գարակեօղեան Որբանոցի ապա- գայի եկամուտն ապահովելու համար, Խնամակալ Մարմինն որոշած է տաս- նեկնիք հազար իրացի մօտ կալուած- ներ գնել :

\* \*

—Յառաջիկայ թուով պիտի հրա- տարակենք Գահիրէի Որբանոցայ ըն- կերութեան Մայր-Դիւանի Առեւնա- դպիր Տիար Ս. Օտապաշեանի ի նպաստ որբերու Օմտուրմանի մէջ ըրած հան- քանակութեան արդիւնքն :

Մասնաւոր յաւելումով պիտի ե- րեւի յառաջիկայ շաբաթ օր, Տիար Յ. Շնորհքեանի «Ճշմարտութիւնն Ա- ղեքսանդրիոյ Ազգային Գործերու վրայ» յօդուածի շարունակութիւնը :

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ՄԻԱՍԵԱՅ ԳՈՐԾԱՌՈՒԹԵԱՆՅ ԳՈՐԾ- ԺՈՂՈՎՈՅ ՀԱՅ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐԵԱՍՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(Շար. մախորդ թիւէն եւ վերջ)

Սոյն հաշուական բացատրութիւններէն յետոյ Յանձնաժողովս կ'անցնի կարևորա- գոյն և կական խնդրոյն վրայ դարձնել Պատ. ժողովոյ ուշադրութիւնը, քանզի կը հաւա- տայ թէ այդ խնդրոյն լուծումէն իսկ կա- խում ունի ընկերութեան գոյութիւնը. կը յուսամք թէ ըմբռնեցիք որ «Նոր-Օր»ի վրայ և խօսքերնիս :

Պատ. ժողովոյ նախորդ նստին մէջ երբ մէկ կողմանէ Տիար Մմբատ Բիւրատ կ'ամ- բաստանուէր թէ ընկերութեան կանոնագրին մէջ սպրդումներ ի գործ դրած է և թերթին գոյութեան և յառաջ եկած գծաւորութեանց սկզբնապատճառ եղած է, միւս կողմանէ Տիար Արմենակ կոկանեան Լսարան-Ըն- թերցատան փառքը կը համարէր այդ «Նոր -Օր»ը :

Գննուելու կարևոր կէտը այն է թէ այդ թերթը թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս ինչ առաւելութիւններ ունի և ինչ օգտա- կարութիւններ կրնայ ընծայել կամ ինչ փաստներ կրնայ պատճառել :

Արդարե՛ կրնանք խոստովանել թէ նիւ- թական տեսակետով գէթ առ այժմ «Նոր- Օր» կատարելապէս փաստակար եղած է ըն- կերութեան և զայն շեղած է բուն իւր նը- պատակէն և ինչպէս կ'երևի թերթին վար- չութեան հաշուեկշիւէն, ո՛չ միայն սպառած է ընկերութեան հնչուն դրամը եղող 2500 զր.ի գումար մը, այլ ընկերութիւնը պար- տական իսկ թողուցած է երեք ամիսներու ընթացքին մէջ 1850 զր.ի գումար մ'ալ, որ կը նշանակէ 4350 զր.ի գումար մը սպառուած, որուն հետքն անգամ չ'երևիր այսօր. յայտնի կ'երևի թէ ո՛չ Տիար Ս. Բիւրատ, ո՛չ միւս անգամք Գործ. ժողովոյ և ո՛չ ալ անգամք Մայր-Դիւանի ըստ բա- ւականին հեռատես չեն գտնուած թէ այդ պիտի ձեռնարկ մը բաւական մեծ նիւթա- կան ուժի մը կը կարօտի և հազիւ թէ ի ձեռին ունենալով փոքրիկ գումար մը փու- թացուցած են թերթին հրատարակումը : Դժուար չէ երևակայել թէ ինչ պիտի ըլլար թերթին վիճակը եթէ երբէք Տիար Մմբատ Փափագեանի նման վեհագի անձնաւորու-

թեան մը աշակցութիւնը չ'հասնէր այն վայրկեանն ուր ա՛լ ընկերութեան նիւթական ամեն միջոցներն և պահեստի դրամն սպա- ռած, հարկ անհրաժեշտ պիտի ըլլար դադ- րեցնել թերթը և այդու ունայն պիտի կո- րընչէին վատնուած դրամներն, ի բաց թող- լով բարոյական վարկաբեկութիւնը ուրկէ իւրաքանչիւրն իւր բաժինը պիտի ունենար : Տիար Մմբատ Բիւրատ ինքզինքը երջանիկ համարելու է որ յաջողած է Տիար Փա- փագեանի հանդիպել իւր ճամբուն վրայ, այն անձին որ ի սէր ազգային շահուն, յօգուտ ընկերութեան յանձնառու եղած է աշակցիլ մտքով և քսակով միանգամայն և ո՛չ մէկ շահու ախկալութեամբ, այլ անձ- նուիրութեամբ. տեղեկութիւն ունեցողները միայն կրնան գնահատել Տիար Մմբատ Փա- փագեանի ըրած գոհողութեան արժանիքը, այդ պատճառաւ իսկ Յանձնաժողովս պար- տաւորութիւն կ'զգայ մասնաւորապէս իւր խորին շնորհակալիքը յայտնել իրեն :

Այսօր նոյն իսկ «Նոր-Օր»ի հրատարա- կութիւնը մեծ գոհողութիւններով կը կա- տարուի. ի հարկէ չէք կրնար երթագրել թէ ընկերաց վճարած ամսաբաժիններով կա- րելի է ի դուրս հանել այդպիսի ծանր գործ մը վստիկ դիտեցիք թէ գրեթէ մէկ տարուան ընթացքին մէջ 1200 զր.ի ամսաբաժին մը միայն կարելի եղած է հաւաքել որ ըսել է ամսական 100 զր.ի գումար մը որ թե- րեւս չբաւերընկերութեան զանազան մանր ծա- խուց, մինչդեռ «Նոր-Օր»ի հրատարակութիւ- նը ամսական քսանէն աւելի ոսկիներու կը կա- րօտի, թէ ինչպէս. «Նոր-Օր»ի վարչու- թեան ներկայացուցած հաշուեկշիւն (\*) կ'ե- րեւի թէ Տիար Դարբինեանի իրաւունքը վը- ճարուած է եռամսեայ 3400 զր.ի մօտ գումար մը. միջին հաշուով ուրեմն կրնայ ամսական 12 ոսկի ենթադրուիլ, որ իր մէջ կը պարունակէ շարքիւ իրաւունք շաբաթը երկու անգամ, սպաղրութեան վարձ և թղթ- թի գին կն. և կն. . գէթ ամսական 500 զր. ալ պէտք է ենթադրել խմբագրի իրա- ւունք, 150 զր. ալ ցրուիչ ամսական, 100 զր. ալ խմբագրատան վարձը, երեք ոսկի ալ թղթատարի ծախք, ուրիշ կրնանք հետեցնել «Նոր-Օր»ի ծախքը՝ ամսական 22 ոսկի միջին հաշուով. ո՛վ պիտի հայ- թայթէ ուրեմն այս գումարը որ անհրաժեշտ է ամեն ամսոյ համար և ինչ հասոյթ ու- նեցած է ցարկ «Նոր-Օր»՝ իրեն համար : Միայն բաժանորդագրիներէ 1850 զր. գան- ձուած է եռամսէի մէջ, ձեռքէ ծախուած թերթերու գումարն եղած է 634 զր. որոց վրայ բարդուելով յայտարարութիւններէ և մահազներէ գոյացած 100 զր.ն ալ, ըն- դամենք եռամսեայ հասոյթ մը կը գոյանայ 2560 զր.ի կամ ամսական 850 զր.ի գումար մը որ երբէք չ'ապահովեր «Նոր- Օր»ի գոյութիւնը :

Բայց հարկ է կատիլ և յուսահատիլ այս թուանշաններուն առջև և ի մի հարուած ջնջել գործ մը որ արդէն սկսուած է և որ բարոյապէս իւր մեծ նշանակութիւնն ունի Լսարան-Ընթերցատան համար և օգտակա- րութիւնն անվիճելի է հանրութեան համար՝ բաւական է որ թերթին վարչութիւնը Ընդհ. ժողովէն բղխած, միշտ գտնուի թէ նիւթա-

(\*) «Նոր-Օր»ի արդի վարչութիւնը հա- ղիւ թէ օգոստ. 11է ասդիմ սկսած է մի- միայն գանձումները ընել. իսկ ծախքերը ըստ առաջնոյն գործ. ժողովոյ ձեռամբ կատարուած են. այնպէս որ կրնամք ըսել թէ Տիար Ս. Փափագեանի մերկայած հաշ- ուեկշիւը մոյժ իսկ գործ. ժողովոյ հաշ- ուեկշիւն է որ պատրաստուած է թղթի կտորներու վրայէն : Ծ. ՅԱՆՉ.

կան թէ՛ բարոյական և թէ՛ գրական տե- սակէտներով կարող և պարկեշտ ձեռքերու մէջ, ընթանայ որոշ ուղղութեամբ առանց այս կամ այն կողմ հակելու, անկեղծ ըլլայ իւր գործածութեանց մէջ, երբէ՛ք չ'ըլլայ գործիք անհասական կամ կուսակցական կիրքերու միշտ աչքի առջև ունենալով ընդ- հանուրին շահը, հեռի վանելով անհասնե- րու վէճերը և անձնական յարձակումները : «Նոր-Օր» որովհետեւ միանգամ ծնունդ առած է, ապրելու իրաւունք ունի և ընկերք պարտաւոր են պահպանել անոր գոյութիւնը՝ իրենց անխնջ աշակցութեամբ, և արդէն այսպիսի ընկերական գործերու մէջ ընկե- րաց միութիւնը ուրիշ բանի չ'ձմարայր բայց եթէ հանրութեան օգտին համար եղած ձեռ- նարկները քաջալերել, անհասական զոհո- ղութիւններն ի մի ամփոփելով :

Արդէն ո՛ր ձեռնարկ՝ ըլլայ անհաստական, ըլլայ հանրային իւր սկսնական քայլերուն մէջ դողդոջուն չէ եղած, և նոյն իսկ փա- սուց չէ ենթարկուած. բայց յարատու- թիւնն է որ պիտի պսակէ գործոյն յաջո- ղութիւնը, բաւ է զի գործն յանձնուած ըլ- լայ պաշտօնին գիտակից անձերու որք ան- կեղծօրէն սիրեն գործը և զայն պահպանեն պարկեշտութեամբ. այն ատեն մի քանի հակառակորդներու հոս կամ հոն յարուցած դժուարութիւնք, կամ բաժնեկիցներու գանձ- ման համար եղած արգելքներ չեն գործը գործը կասեցնել իւր ընթացքին մէջ. գոր- ծը իւր արժանիքը կը փայլեցնէ և լուրջ գատողութեանց գնահատման կ'արժանանայ : Ներկայ ժամանակներուն մէջ այնքան թերթերու հրատարակութեան ձեռնարկներ կ'ըլլան, այնքան ասուպի նման կ'երևան ու կ'աներևութանան որ կրնանք ըսել թէ օրէ կը ծնին և օրէ կը մեռնին և ժողո- վուրդը ա՛լ սկիստիկեան մը եղած, անոնց յարատուութեան վրայ երբէք հաւատք չու- նի և այդ պատճառաւ իսկ, ստանալով հան- դերձ թերթը, չուզեր տարեկան բաժանոր- դագիրն վճարել, հակառակ թերթին խնդրա- նաց, թախանձանաց, սպառելով գէթ առա- ջին վեցամսէի մը բարբորումն :

Նկատեցէք թէ այսօր արտասահմանի մէջ վեց հարիւր հոգիներ գրեթէ թերթը միօրի- նակ կ'ստանան և որոնցմէ դեռ գանձում մը չէ եղած. իրաւամբ բաժանորդ կը նկատ- ուին անոնք, քանի որ չեն ալ մերժած թեր- թը. եթէ այդ բաժանորդագրիներուն մէկ քա- ոորդն ալ ջնջել հարկ ըլլայ, մնացեալ թիւը կը բաւէ ապահովել կատարելապէս «Նոր Օր»ի գոյութիւնը. գոցեցէ՛ք այսօր «Նոր Օր»ը և ջնջած պիտի ըլլաք նաև այդ ամ- բողջ բաժանորդագրիները ուրեմն գէթ տա- րի մը յարատուելու միջոցներուն վրայ պէտք է խորհրդածել. եթէ թերթի հրատարակու- թիւնը կրնայ անհասնելու ապրուստի մի- ջոցներ հայթայթել, ապա ուրեմն «Նոր Օր»ալ պիտի կրնայ նիւթական հասոյթի աղբիւր մը ըլլալ Լսարան-Ընթերցատան, ի բաց թողով բարոյական առաւելութիւն- ները. իսկ եթէ նպաստաւոր բոլոր հաւա- նականութիւնները մէկգի թողով, դիցուք թէ գանձումներն չբաւեն թերթին պահպան- ման և տարուան մը շրջանէ յետոյ թեր- թը պարտական մնացած ըլլայ, այդ պարա- գային մէջ իսկ, կը յուսանք դժուար չպի- տի ըլլայ դիմել հասոյթի անուղղակի աղ- բիւրներու ինչ որ ընկերութեան կանոնագիրը նախատեսած է. թատրոն, կամ վիճակահա- նութիւն և կամ բարերար ձեռք մը կու- գայ գոցել այդ բաց դուռը և այդ տարեկան շրջանէն յետոյ Պատ. Ընդհ. ժողովոյ կը- րնայ իւր բացբաժակ կամքն յայտնել «Նոր Օր»ի գոյութեան խնդրոյն մէջ, բայց տար- ուան մը փորձառութենէ յետոյ միայն-

Յանձնաժողովս՝ իւր տեղեկագիրը Պատկ. ժողովոյ մասուցած միջոցին կը հաւատայ թէ խզի մտօք կատարած է իւր պարտա- կանութիւնը, խնդիրներն իրենց օւղիղ և ճշը- գրիա վիճակին մէջ նկարագրելով և Պատկ. ժողովոյ դատողութեան և վճռոյն յանձնա- նած է զանոնք և այսու իր պաշտօնը աւար- տած կը նկատէ :

Ի դիմաց հաշուեցնել Յանձնաժողովոյ միամեայ գործածութեանց Գործ. ժողովոյ հայ Լսարան-Ընթերցատան ընկերութեան :

Առեւնադպիր Առեւնապետ  
Ե. ԱՄԱԿԵԱՆ Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
ԱՆԿԱՎ  
Շ. ՇԻՇՄԱՆԵԱՆ Ա. ԿՈԿԱՆԵԱՆ  
Ա. ՓԱՓԱՉԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՃԱՅՈՒՄ. Առ Տ. Տ. Թերթիպաշեան.—Մաս- ցանք ձեր Հոկտ. 6 թիւ նամա- կըն յորում կը ծանուցանէք 35 զր. գործաւթուղի իբր բաժա- նորագին «Նոր Օր»ի դրկած ըլ- լալինի՞ և մինչև ցարկ ընկալա- գիր ձեզ հասած չլլալն. երեկ- ուան փոթիւ ձեր ընկալագի- րըն դրկուեցաւ : Այս մասին նե- րողամտութիւն խնդրելով հան- դերձ՝ վարչութիւնս կը փութայ ձեր մասնաւոր ուշադրութեան յանձնարարել «Նոր Օր»ի 34 թիւով Ազգային Լսարանը շաբ- քին մէջ՝ առ արդայ բաժանորդ օւղուած ազգն, ուր Տ. Ս. Բիւրատի «Նոր Օր»ի խմբագրու- թեան զազարումը փութացնող կարգ մը նիւթական օւ բարոյա- կան զեղծումներ անարկուած էին. արդէն ձեր ընկալագրի օւ- շանալն ալ նոյն պատճառներն մին եղած է, վարչութիւնս հա- տատած ըլլալով որ Տ. Բիւրատ ձեր դրկած բաժանորդագրին գաղ- տագողի գանձած օւ իւրացնել օւ- զած էր, և որովհետեւ առաջին օրէն վարչութիւնս նախանձախն- դիր եղած է գործին ուղղութեան և «Նոր Օր»ի կենսական շա- հերու պահպանման՝ երբ վերա- հասու եղաւ Տ. Բիւրատի ան- ներելի զեղծումներուն գորս մի ըստ միջոցէ պիտի հրատարա- կեմք «Նոր Օր»ի մէջ առ ի դի- տութիւն ազգայնոցս, փութաց վարչական ու պատժական ամեն ստորիութիւն գործադրել յիշեա- լի մասին. ե ի մասնաւորի աղ- դարարելով որ դրամ կամ ուն թղթակցութիւն ուղղակի դրկուի վարչութեան հասցէին, և ոչ թէ խմբագրի անուան :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Երեք հազար Չինացիներ յարձակե- լով Գերմանացոյ վրայ՝ Թիէն-Չիւի Հարուստին կողմը յաղթանակ տա- րած են :

—Եգիպտական երկաթուղոյ վար- չութեան Տնօրէն Պ. Ժիրուար այլևս Գահիրէ չպիտի վերադառնայ, որուն պտշտօն տրուած է Թրանսվալի մէջ :

—Բէթրոլի դիւնը հետզհետէ բարձ- րանալու վրայ է մինչև իսկ զրոյց կայ թէ Կազի ընկերութիւնը մտադիր է յառաջիկայ Դեկտեմբեր 1էն ըս- կեսալ մէկ մէթր խորանարդին գինը 30 զր.է 35ի բարձրացնել :

### Լ Ր Ա Ք Ա Ղ

Շարժումն մէջ կը կարգանք .

Ռուսմանիոյ դեպքանատան գործակատարը Պատրիարքարանի կը հաղորդէ թէ՛ Պօթուլանի մէջ գտնուող երբեմն քահանայ Աթանաս անուն անձը այս անգամ վերջնականապէս հեռացած է Ռուսմանիայէն : Աթանասի Ռուսմանիայէն մեկնումը աղմկայի եղեր է, բայց վերջապէս տեղական կառավարութիւնը գործադրել է իր կարգադրութիւնը և Ռուսմանիոյ հայերն ալ ազատուի են այս մարդուն ձեռքէն : Յիշեալը այս անգամ եկեղեցական տարազով եզրագոտու անցեր է և այնտեղ կարգ մը միամիտ գըտնելով հաւատացուցեր է թէ՛ ինքն անմեղ մէկն է : Կը զգուշացնենք մեր բոլոր ազգայինները որ չի խաբուին այս գառնազգեստ գայլ-մարդուկին կեղծ ու պատիւ խօսքերէն : Վասն զի այս այն մարդն է է որ անկարգութիւն չէ մընացած որ չի գործէ Պոլիս, Ռուսմանիա և այլուր :

Չինական Մայր-Թագուհին իւր հաւատարիմ նախարարներէն իշխան ճաճի և հա-Երէնի նախարար է Շանգ-թունգ կոչուած թուրք : Այդ թուրք կրողը իրաւունք ունի առանց բարձրադիցն հրամանի գլխատել յանցաւորները առանց նիստողութեան առնելու անոնց դատակարար և կամ ծագումը :

### Ա Ձ Դ

Ազգային Գալստեան վարժարանի համար Օգնական - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողը կրնան գիմել վարժարան և բանակցել Տնօրինութեան հետ :

Տնօրինութեան Գալստեան երկու վարժարանի

Le Gérant J. MUNIER

### ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապօին Պապ-Էլ-Պոսթան Հրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը  
**ՕՀԱՆՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ**  
**ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.**

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղասէր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը : Ապօինի ընդարձակ հրապարակին զովագին օգը, վայրին սքանչելի դիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը, այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԲՅՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը :

Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր ինամբով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օշարակ ամենէն գըժուարահաճներն անգամ պիտի գոհ մնան եփրասէն :

### ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

**ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶԱՆՃԵԱՆ**  
Շարա Ապու-Սապահ  
Նիեու-Տնիվեուկ իրիզարանին դիմացը .

Օգտաուն ու զուարճալի դիպք մաքուր ու վայելուչ սպաս : Համեղ ու մննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն : Տոխ հաշարուցակ մը դիպք մատչելի գիներով, ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը :

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին :

### ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՍՍՍՅԵԱՆ**

Լիոնի հանրաժանութի գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եզիպտոսի գործակալն ալ, Տ. Մ'կրտիչ Սօսյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ :

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վստահացուած փոխանորդազրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուէտի քօնսիլէի, Վիլ տը Բարիի գործողութիւններ, գանձումներ : Ամական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած :

Փափաքողները հաճին դիմել Նիւպառի վրայ փաստարան Ռարթաքիի գրասենեակը :

րենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն :

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին :

### ԱՏԱՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկոնը :

Կը բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 :

**ՁՈՒԼԻԶ-ՄԵԲԵՆԱԿՈՐԾ**  
**ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ**  
**ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
Ս. ԴԱՐԲԻՍԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏԵՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրը արհեստներու վերաբերեալ, ծորակ, և ըն., յաճախորդները գոհացնող պայմաններով :

**Ի ԳԱՀԻՐԷ**  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ**

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորման, մահազեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ և ըն. :

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, անվնաս ինքնաւոք եւ ճաշկատու սպաքուքեամբ :

**ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ**